ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ՀՀ Շիրակի մարզ, ք. Մարալիկ, 0242- 2-22-37, էլ. հասցե՝ ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 757-Ա

«20» օգոստոսի 2026 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ, ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ, ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 11-ՐԴ ՓՈՂՈՑ , ԹԻՎ 4 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-100-0022-0021 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ՝ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-ԻՑ ՀԵՏՈ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԸ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑԸ ԵՎ ՊԱՐԻՍՊՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության, 4-րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 9-րդ, 10-րդ, 11-րդ կետերի, 13-րդ կետի «ա», ենթակետերի դրույթներով, հիմք ընդունելով ինքնակամ կառույցների հաշվառման տվյալների մուտքագրման **2026ENSĘ3U** տեղեկանքը, քաղաքացի Հովիկ Իշխանի Համբարձումյանի (3/5), Երազիկ Իշխանի Համբարձումյանի(1/5),Հայկուհի Իշխանի Դավթյանի (1/5) կողմից՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարան ներկայացված դիմումը՝ 2001 թվականի մայիսի 15-ից հետո կառուցված բնակելի նշանակության ավտոտնակը, տնտեսական շինությունները, սանհանգույցը և պարիսպները օրինական ճանաչելու մասին.

Որոշում եմ՝

1. Հաշվի առնելով, որ քաղաքացի՝ Հովիկ Իշխանի Համբարձումյան /ծնված՝ 17-ը օգոստոսի 1980 թվական, նույնականացման քարտ՝ 019428614, տրված 11-ը դեկտեմբերի 2025 թվականին՝ 028-ի կողմից/, Երազիկ Իշխանի Համբարձումյան/ծնված՝ 22 հոկտեմբերի 1977թվական, անձնագիր՝ AV0548951,տրված 07 դեկտեմբերի 2022 թվականին՝ 022-ի կողմից/,Հայկուհի Իշխանի Դավթյան/ ծնված՝ 11-ը հունիսի 1979 թվական, անձնագիր՝ AT0369132, տրված 30-ը հունվարի 2020 թվականին՝ 022-ի կողմից/, համատեղ սեփականության իրավունքով պատկանող

(Հիմք՝ վկայական N 06052022-08-008) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Սառնաղբյուր բնակավայր 11-րդ փողոց, թիվ 4 բնակելի տուն հասցեում գտնվող 08-100-0022-0021 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության փաստացի 0.14843 հա մակերեսով հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված 57,64 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակ, 9.10 և 6.96 քառակուսի մետր արտաքին մակերեսով պարիսպները /հետագայում՝ անշարժ գույք/, բավարարում են՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգով» սահմանված ինքնակամ շինությունների օրինականացման պայմաններին, ինքնակամ կառուցված շինությունները ճանաչել օրինական:

2. Օրինական ճանաչված շինությունների և նրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասի Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի նախագահի հրամանով հաստատված ձևին համապատասխան կազմված հատակագծերն ու շինությունների բնութագիրը կցվում են սույն որոշմանը:

3. Նշել, որ օրինական ճանաչված շինությունը՝

ա) չի գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում,

բ) չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

գ) կառուցված չե Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,

դ) կառուցված է քաղաքաշինական նորմերին ու կանոններին համապատասխան,

ե) չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Ինքնակամ շինություն օրինական ճանաչվելու համար սահմանել վճարների հետևյալ դրույքաչափերն ու վճարման պայմանները՝

ա) Շինությունները, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է՝ **73.7** քառակուսի մետր, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 13-րդ կետի «ա» ենթակետերի համաձայն, վաճառքի գինը շինության յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար սահմանվում է բազային տուրքի 10-ապատիկի չափով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ հաստատված 17-րդ գոտում ընդգրկված՝ Սառնաղբյուր բնակավայրի համար սահմանված շինության՝ 0,0743 գործակցի կիրառմաբ, վճարի չափը կազմում է՝

73,7 քառակուսի մետր X 10000 դրամ X 0,0743 = 54760 (հիսունչորս հազար յոթ հարյուր վաթսուն) Հայաստանի Հանրապետության դրամ:

բ) Ինքնակամ շինության օրինականացման համար վճարի չափ է սահմանվում՝ **54760 (հիսունչորս հազար յոթ հարյուր վաթսուն) Հայաստանի Հանրապետության դրամ,** որը ենթակա է մուծման Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի բյուջե՝ **900495101447** հաշվեհամարին:

գ) Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում սահմանված վճարը չվճարելու դեպքում՝ որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Հողամասում առկա է 2021 և 2025 թվականներին կառուցված շինությունները օրենքով սահմանված կարգով ենթակա չեն օրինականացման, ուստի շինությունները թողնել ինքնակամ:

6. Պարտավորեցնել անշարժ գույքի սեփականատիրոջը սահմանված կարգով և ժամկետում կատարել օրինականացման համար սույն որոշմամբ սահմանված վճարումը և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ենթարկել պետական գրանցման:

7. Որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն սույն որոշման մասին պատշաճ ծանուցման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ **Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ**

/Փոխարինող/

<<19>> օգոստոսի 2026 թվական
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
քաղաք Մարալիկ, Մադաթյան փ., հեռ.0242-2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 758-Ա

20 օգոստոսի 2026 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ /ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-003-0026-0060/ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ սահմանված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» 28-րդ կետի, 29-րդ կետի 3-րդ ենթակետի, 50-րդ և 52-րդ կետերի դրույթներով.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքում գտնվող /կադաստրային ծածկագիր 08-003-0026-0060/ Անի համայնքին սեփականության իրավունքով պատկանող՝ 0,00190 հեկտար հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Անի համայնք, Մարալիկ քաղաք, Հ. Շահինյան փողոց, 6-րդ նրբանցք, թիվ 2/2 հողամաս:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ**

/Փոխարինող/

«20» օգոստոսի 2026 թվական
Քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
քաղաք Մարալիկ, Մադաթյան փ., հեռ.0242-2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 759-Ա

20 օգոստոսի 2026 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԻԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ /ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-012-0007-0001/ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱՆՈՒՄ ԱՌԿԱ ՇԵՆՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» 29-րդ կետի 4-րդ ենթակետի, 50-րդ և 52-րդ կետի, 63-րդ և 64-րդ կետերի դրույթներով և հաշվի առնելով, որ Անի համայնքի Անիավան բնակավայրի 10-րդ փողոց թիվ 6 շենք հասցեն վերանվանվել է՝ 10-րդ փողոց, թիվ 12 շենք. ***որոշում եմ՝***

1. Անի համայնքին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, Անիավան բնակավայրի 10-րդ փողոց թիվ 6 շենք, 08-012-0007-0001 կադաստրային ծածկագրով հասցեն վերահասցեավորել՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Անի համայնք, Անիավան բնակավար, 10-րդ փողոց, թիվ 12 շենք:

2. Չեղյալ համարել սույն որոշման 1-ին կետում նշված «Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզի Անի համայնքի Անիավան բնակավայր 10-րդ փողոց թիվ 6 շենք»՝ օբյեկտի հին հասցեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ **Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ**

/Փոխարինող/

«20» օգոստոսի 2026 թվական
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
քաղաք Մարալիկ, Մադաթյան փ., հեռ.0242-2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 760-Ա
20 օգոստոսի 2026 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՍԱՀԱԿՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԹՈՒՐ ՊԱՅՔԱՐԻ ԱՐՍԵՆՅԱՆԻՆ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ /ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-043-0009-0001/ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ՆՐԱՆՈՒՄ ԱՌԿԱ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ սահմանված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» 28-րդ կետի, 29-րդ կետի 3-րդ ենթակետի, 50-րդ և 52-րդ կետերի դրույթներով.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Իսահակյան բնակավայրում գտնվող /կադաստրային ծածկագիր 08-043-0009-0001/ Արթուր Պայքարի Արսենյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ 0,289 հեկտար հողամասին և նրանում առկա բնակելի տանը տրամադրել հետևյալ հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Անի համայնք, Իսահակյան բնակավայր, 2-րդ փողոց, թիվ 1 բնակելի տուն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

/Փոխարինող/

«20» օգոստոսի 2026 թվական
Քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ, քաղաքային հրապարակ 1
Հեռ. (0242)2-24-00, (0242)2-22-37, էլ. հասցե՝ ani.shirak@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«20» «օգոստոս» 2026 թվական N 761-Ա

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյանս, վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 275-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով՝ օրենսգրքի 219[1] հոդվածով, 2026 թվականի օգոստոսի 20-ին, ժամը 14:30-ին Մարալիկ քաղաքում, դռնբաց վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Սարգիս Աղասու Ուռուտյանի (Հասցե՝ Շիրակի մարզ, ք. Մարալիկ, 2-րդ թաղ., 6-րդ շենք, բն. 43) ներկայությամբ, օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248-րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278-279-րդ հոդվածներով սահմանված կարգով քննելով՝ քաղաքացի Սարգիս Աղասու Ուռուտյանի կողմից 2026 թվականի մարտի 04-ին ներկայացված դիմումը և կից նյութերը, պարզեցի.

2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Սարգիս Աղասու Ուռուտյանը 2026 թվականի մարտի 04-ին Անիի համայնքապետարան է ներկայացրել դիմում, որով խնդրել է Մարալիկ քաղաքի Հրանտ Շահինյան փողոց թիվ 30/2 հասցեում գտնվող համայնքապատկան հողատարածքում ինքնակամ կառուցված շինությունը օրինականացնել և հողամասը ուղղակի վաճառքով օտարել Սարգիս Աղասու Ուռուտյանին:
Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Հրանտ Շահինյան 30/2 հասցեում գտնվող համայնքապատկան հողատարածքում Սարգիս Աղասու Ուռուտյանը կառուցել է ինքնակամ շինություն, որով ծանրաբեռնվել է համայնքային սեփականություն հանդիսացող 08-003-0026- կադաստրային ծածկագրով հողամասը:

Արդյունքում քաղաքացի Սարգիս Աղասու Ուռուտյանի կողմից թույլ է տրվել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինական օրենսդրության խախտում, որի համար քաղաքաշինական գործունեության սուբյեկտը կրում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

<<Վարչարարության հիմունքների ու վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի <<ա>> կետի համաձայն՝ Անի համայնքի ղեկավարի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ:

07.08.2026 թվականին Սարգիս Աղասու Ուռուտյանին ք. Մարալիկ, 2-րդ թաղ., 6-րդ շենք, բն. 43 հասցեով փոստային ծառայության միջոցով ծանուցագիր է ուղարկվել վարչական վարույթի լսումների տեղի ու ժամի վերաբերյալ:

Անի համայնքապետարանում 11 . 08 . 2026 թվականին ժամը 14:30-ին անցկացվել է վարչական վարույթի լսումներ, որին մասնակցել է պատշաճ ծանուցված Սարգիս Աղասու Ուռուտյանը:

Սարգիս Աղասու Ուռուտյանը վարույթի ընթացքում միջնորդություն ներկայացրեց վարույթը հետաձգելու վերաբերյալ:

20.08.2026 թվականին վարույթը վերսկսվեց, որի ընթացքում իրավախախտում կատարած անձը նշեց, որ առարկություն չունի քանի որ կատարել է վերը նշված իրավախախտումը:

Օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

- Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը պետությանը, համայնքներին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա կատարելը հողօգտագործման իրավունք չունեցող անձի կողմից՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից երկուհազարհինգհարյուրապատիկի չափով:

4. Սույն հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը վարչական տույժ նշանակելու օրվանից հետո շարունակելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկից երեքհազարապատիկի չափով:

Օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքներ են համարվում՝

1. Հակահրավական վարքագիծը շարունակելը, չնայած այն դադարեցնելու մասին դրա համար լիազորված անձանց պահանջին.
2. Մեկ տարվա ընթացքում կրկին անգամ նման իրավախախտում կատարելը, որի համար անձն արդեն ենթարկվել է վաչական տույժի. իրավախախտում կատարելը նախկինում հանցագործություն կատարած անձի կողմից:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ ամբողջությամբ հաստատված եմ համարում այն փաստը, որ քաղաքացի Սարգիս Աղասու Ուռուտյանի կողմից թույլ է տրվել վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 154-րդ հոդվածի երրորդ մասով և առկա չէ Օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը բացառող որևէ հանգամանք:

3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով՝ Օրենսգրքի 23-րդ հոդվածի 2-րդ կետի, 32-րդ, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 37-րդ, 48-րդ, 281-րդ հոդվածի, 282-րդ հոդվածի 1-ին կետի, 283-րդ, 286-288-րդ, 298-րդ, 305-րդ և <<Նվազագույն ամսեկան աշխատավարձի մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդված, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42–րդ հոդվածի 1–ին մասի 8–րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 55–րդ, 58–րդ հոդվածի 1–ին կետով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ հոդվածների դրույթներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Քաղաքացի Սարգիս Աղասու Ուռուտյանին ենթարկել վարչական պատասխանատվության, նշանակելով տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով՝ 2.000.000 /երկու միլիոն/ Հայաստանի Հանրապետության դրամի չափով:
2. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել Սարգիս Աղասու Ուռուտյանին :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սարգիս Աղասու Ուռուտյանին պատշաճ կարգով իրազեկելու պահից:
4. Սույն որոշումը կարող է գանգատարկվել Սարգիս Աղասու Ուռուտյանի կողմից որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկամսյա ժամկետում՝ վարչական, կամ դատական կարգով:
5. Տուգանք նշանակելու մասին որոշման հարկադիր կատարումը իրականացվում է <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի համաձայն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 762-Ա

<<21>> օգոստոսի 2026 թվականի քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 06-Ի N 899-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ սահմանված <<Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի>> 28-րդ կետի, 29-րդ կետի 3-րդ ենթակետի, 50-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի դրույթներով և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2025 թվականի նոյեմբերի 06-ի N 899-Ա որոշման մեջ սեփականատերը «Գալյա Երջանիկի Բարսեղյան» նշվել է սխալ. **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2025 թվականի նոյեմբերի 06-ի N 899-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

ա) Որոշման մեջ «Գալյա Երջանիկի Բարսեղյան» սեփականատերը փոխարինել՝ «Անի համայնք»:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ**

/Փոխարինող/

<<21>> օգոստոսի 2026 թվական
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 763-Ա

«21» օգոստոսի 2026 թվականի քաղաք Մարալիկ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 20-րդ հոդվածով և հիմք ընդունելով 2026 թվականի փետրվարի 26-ի Անի համայնքի ավագանու թիվ 20-Ա որոշումը.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Լուսաղբյուր բնակավայրի բնակիչ Մարմար Ֆերդինանդի Բաղալյանին (անձնագիր AT0542855 տրված՝ 2020 թվականի օգոստոսի 17-ին, 022-ի կողմից) տրամադրել 15000 /տասնհինգ հազար/ Հայաստանի Հանրապետության դրամին համարժեք սոցիալական աջակցություն՝ դեղեր ձեռք բերելու համար, որը փոխանցվելու է «Անահիտ Խաչատրյան» անհատ ձեռնարկատիրությանը:
2. Սոցիալական աջակցության տրամադրումը իրականացնել Անի համայնքի բյուջեի «Նպաստներ» հոդվածի հաշվին:
3. Որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ**
/փոխարինող/

«21» օգոստոսի 2026 թվականի
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
քաղաք Մարալիկ, Մադաթյան փ., հեռ.0242-2-22-37, ani.shirak@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 764-Ա

«21» օգոստոսի 2026 թվական քաղաք Մարալիկ

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՍՄԲԱՏ ԱՎԵՏԻՔԻ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ (ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ՝ 61400206) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑԻ 4-ՐԴ ՏԱՆ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 27-ի N 140-Ն որոշման հավելված 1-ով և հաշվի առնելով անհատ ձեռնարկատեր Սմբատ Ավետիքի Մինասյանի հայտը.

որոշում եմ՝

1. Տալ թույլտվություն անհատ ձեռնարկատեր Սմբատ Ավետիքի Մինասյանին (հարկ վճարողի հաշվառման համար՝ 61400206) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Շիրակավան բնակավայրի 2-րդ փողոցի 4-րդ տան հասցեում գտնվող առևտրի օբյեկտում (18 քառակուսի մետր ոչ հիմնական շինությունում) ոգելից և ալկոհոլային խմիչքների, ինչպես նաև ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք իրականացնելու համար:

2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2026 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Սմբատ Ավետիքի Մինասյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

/փոխարինող/

«21» օգոստոսի 2026 թվական
Քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
քաղաք Մարալիկ, Մադաթյան փ., հեռ.0242-2-22-37, ani.shirak@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 765-Ա

«21» օգոստոսի 2026 թվական քաղաք Մարալիկ

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՍԵԴԱ ԱՐԱՄԱՅԻՍԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ (ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ՝ 61400334) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՁԻԹՀԱՆՔՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1 ՓՈՂՈՑ, ՏՈՒՆ 23 ՀԱՍՑԵՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 27-ի N 140-Ն որոշման հավելված 1-ով և հաշվի առնելով անհատ ձեռնարկատեր Սեդա Արամայիսի Մարգարյանի հայտը.

որոշում եմ՝

1. Տալ թույլտվություն անհատ ձեռնարկատեր Սեդա Արամայիսի Մարգարյանին (հարկ վճարողի հաշվառման համար՝ 61400334) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Ձիթհանքով բնակավայրի 1 փողոց, տուն 23 հասցեում գտնվող առևտրի օբյեկտում ոգելից և ալկոհոլային խմիչքների, ինչպես նաև ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք իրականացնելու համար:

2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2026 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Սեդա Արամայիսի Մարգարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ**

/փոխարինող/

«21» օգոստոսի 2026 թվական
Քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
քաղաք Մարալիկ, Մադաթյան փ., հեռ.0242-2-22-37, ani.shirak@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 766-Ա

«21» օգոստոսի 2026 թվական քաղաք Մարալիկ

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՋՈՒԼԻԵՏԱ ԱՎԵՏԻՔԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ (ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ՝ 57315861) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՓԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 4 ՓՈՂՈՑ, ՏՈՒՆ 9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 27-ի N 140-Ն որոշման հավելված 1-ով և հաշվի առնելով անհատ ձեռնարկատեր Ջուլիետա Ավետիքի Հակոբյանի հայտը.

որոշում եմ՝

1. Տալ թույլտվություն անհատ ձեռնարկատեր Ջուլիետա Ավետիքի Հակոբյանին (հարկ վճարողի հաշվառման համար՝ 57315861) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Ջրափի բնակավայրի 4 փողոց, տուն 9 հասցեում գտնվող առևտրի օբյեկտում ոգելից և ալկոհոլային խմիչքների, ինչպես նաև ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք իրականացնելու համար:

2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2026 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Ջուլիետա Ավետիքի Հակոբյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ**
/փոխարինող/

«21» օգոստոսի 2026 թվական
Քաղաք Մարալիկ